Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 08

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<24>> մայիսի 2022թ. գ. Երևան

2022 թվականի մայիսի 24-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, պատասխանատու քարտուղար
Ս. Բաղինյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական, հանձնաժողովի անդամ
Խ. Սողոմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային օդային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը.

Նիստն արձանագրում էր հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

2. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 2 հայտերի քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

1.1 Քննարկվեց՝

<<ԱՎՏՈ ՏԵԽ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի մայիսի 12-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, Կազմակերպության 2022 թվականի մայիսի 12-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ԱՎՏՈ ՏԵԽ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

2.1 Քննարկվեց՝

<<ԴԻՋԻՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի մայիսի 15-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի մայիսի 5-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիրներ տրամադրելու մասին: Հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը իրականացվել է 2022 թվականի մայիսի 23-ին լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Խ. Սողոմոնյանի, Տ. Գասպարյանի և Ա. Ստեփանյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ԴԻՋԻՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.1 Քննարկվեց՝

<<ՎԱՐԴԱԶ>> ՍՊԸ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի մայիսի 3-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և մայիսի 17-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնային սարքավորումների տեղադրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի մայիսի 3-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնային սարքավորումների տեղադրման ներդիր տրամադրելու մասին: 2022 թվականի մայիսի 17-ին Կազմակերպությունը ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ ամբողջականեցնելով գործունեության վայրի համար նախատեսված տարածքի չափերի վերաբերյալ տեղեկությունը:

Հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը իրականացվել է 2022 թվականի մայիսի 23-ին լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Խ. Սողոմոնյանի, Տ. Գասպարյանի և Ա. Ստեփանյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՎԱՐԴԱԶ>> ՍՊԸ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի պատասխանատու
քարտուղար Ա. Ստեփանյան